ՀՀԿԳՆ հետ N - Ա-6/18-12 պայմանագրով իրականացվող «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի 2012թ. ապրիլ-հունիս ամիսների հաշվետվություն

1. *Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին համապատասխան կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրի չափորոշչի, ըստ չափորոշչի՝ ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման համակարգի մշակում*

Հունիսի 1-15-ը կրթական ծրագրերում կազմակերպվել են ուսումնական պլանով որոշված ամառային ճամբարը, «Ուսումնական ամառ» նախագիծը, որոնց շրջանակում իրականացվեցին մարզական ակումբների մրցաշարեր, երաժշտական, թատերական, էկոլոգիական, ուսումնական այլ նախագծեր, հայրենագիտական ճամփորդություններ, ընդարձակվեց ակումբային գործունեությունը: Մշակվեցին և իրականացվեցին սովորողի գիտելիքների, կարողություններ և հմտությունների գնահատման՝ «Ես մեդիագետ եմ» (1-ին դասարան), «Իմացումի հրճվանք» կրթական ծրագրի շրջանավարտ (4-րդ դասարան), «Կրտսեր դպրոցի շրջանավարտ» (6-րդ դասարան) նախագծերը: Որպես ուսումնական նախագծեր՝ մշակվեցին և կազմակերպվեցին 2012-ի Զատիկ, Համբարձման ծեսերը, «Անտիվիրուս Կոմիտաս 5 երգ +»: Սկսվել է կրթահամալիրի դպրոցներ ընդունվող սովորողների ամառային մեդիապարապմունքների կազմակերպումը: Դասավանդողների հունիսյան պարապմունքների ժամանակ խմբերում քննարկվեցին այդ աշխատանքների արդյունքները, ամառային նախագծերը:

Կազմվել, քննարկվել և կրթահամալիրի մասնաժողովում, խորհրդում հաստատվել են 2012-2013 ուստարվա ուսումնական պլանները: Մշակվել է կրթահամալիրի լաբորատորիաների աշխատակարգերը՝ որպես հանրակրթական դպրոցներում համապատասխան բնագավառի աշխատանքները ծրագրող և կազմակերպող կենտրոններ: Ամառային ճամբարի և ուսումնական նախագծերի արդյունքները կներառվեն «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրի չափորոշչի, առարկայական նոր ծրագրերի մեջ, որոնք աշխատանքային փուլում են: Այդ աշխատանքին մասնակցում են կրթահամալիրի բոլոր մանկավարժական աշխատողները: Ըստ կրթական ծրագրերի՝ նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ, նախնական և միջին մասնագիտական, նշանակված են ծրագրային աշխատանքի համակարգողները, դասընթացների ծրագրերի պատասխանատուները, mskh.am-ում և կրթահամալիրի փոստի Sky Driv-ում առանձնացված են տարածքներ, որտեղ ծրագրերը սահմանված կարգով հատվածաբար հրապարակվում, քննարկվում, լրամշակվում, փորձաքննության են ենթարկվում:

2. *Կրթահամալիրի, դպրոցի, դասարանի, խմբի, սովորողի ուսումնական գործունեության, ուսումնական պարապմունքի արդյունավետության գնահատման էլեկտրոնային համակարգի ամբողջացում, էլեկտրոնային մատենավարության ամբողջական ներդրում*

Հեղինակային մանկավարժության մայիսյան 7-րդ հավաքին ներկայացվեցին էլեկտրոնային մատենավարության ներդրման, 2011-2012 ուստարում էլեկտրոնային մատենավարության կազմակերպման արդյունքները: Կատարված ճշտումները, լրացումները թույլ են տալիս նոր ուսումնական տարում կրթահամալիրի կրթական ծրագրի, ուսումնական գործի կազմակերպման մատենավարությունը կազմակերպելու միայն էլեկտրոնային եղանակով:

3. *Մեդիահանրակրթության սովորողների, դասավանդողների առողջության պահպանման ծրագրի մշակում և ներդրում*

mskh.am-ում առողջագիտության կենտրոնի էջը պարբերաբար լրացվել է մեդիահանրակրթության մեջ ընդգրկված սովորողներին և դասավանդողներին ուղղված նյութերով: Ծրագրով ուսումասիրվել են ամառային բաց լողափերի, լողուսուցման պայմանները, մշակվել լողավազանի շահագործման աշխատակարգ: Ապրիլին կրթահամալիրում երեխաների ատամնաբուժական առաջնային կանխարգելման ծրագրով կրթահամալիրում աշխատել է 4-րդ ստոմատոլոգիական պոլիկլինիկայի արտագնա մասնագիտական խումբը: Կրթահամալիրի արհեստակցական կազմակերպության աջակցությամբ կազմակերպվել է Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոնի ակնաբույժների այցը կրթահամալիր, մեդիահանրակրթության ծրագրի դասավանդողների տեսողության ստուգում: Սովորողների բժշկական փաստաթղթերի էլեկտրոնային բազայի ստեղծման նախագծով թվայնացվել են կրթահամալիրի Միջին և Ավագ դպրոցների սովորողների բժշկական գործերը:

4. *Անհատի կրթության իրավունքի ապահովման նպատակով առցանց ուսուցման ծրագրի մշակում և կազմակերպում*

HP ընկերության նվեր գերհզոր նոր սերվերի, համապատասխան ծրագրերի տեղադրումով, լուծվում է առցանց ուսուցման տեխնիկական-ծրագրային ապահովման խնդիրը:

Դասավանդողների հունիսյան պարապմունքների ժամանակ քննարկվեցին նաև առցանց ուսուցման կարգի դրույթները, ծրագրով անհրաժեշտ ուսումնական (ուսուցողական և ստուգողական) նյութերին ներկայացվող պահանջները:

5. *Համացանցում դասավանդողների և սովորողների անհատական էջերի (բլոգների) գործարկում՝ որպես ուսումնական փարածք. սովորողների հեռավար ուսուցում: Ուսումնական նոր կայքի, ենթակայքերի, էլեկտրոնային պարբերականների (Լուսաստղ, ART-mskh) ստեղծում*

Մարտ-մայիս ամիսներին կրթահամալիրի դասավանդողների համար բլոգների, ուսումնական օրագրերի վարման դասընթացների կազմակերպումը հնարավոր դարձրեց, որ 2012-2013 ուսումնական տարվա սկզբին բլոգ ունենան բոլոր դասավանդողները, նրանց ղեկավարությամբ գործարկվեն սովորողների անհատական և խմբային բլոգները, mskh.am-ի սոցիալական ցանցում օրագրերի վարումը դառնա ուսուցման կազմակերպման պարտադիր միջավայրերից մեկը: Այդ նպատակով ապրիլին կրթահամալիրի սովորողների խումբը ուսուցչի հետ մասնակցել է NeoMedia ընկերության կողմից կազմակերպվող «Seo բլոգերների համար» թեմայով սեմինար-դասընթացին: Հեղինակային մանկավարժության հեղինակների մայիսյան 7-րդ հավաքին ներկայացվել են սովորողների, դասավանդողների անհատական էջի (փաթեթ, բլոգ), էլեկտրոնային օրագրի, էլեկտրոնային մատյանի կիրառման արդյունքները:

Կրթահամալիրի «Տիգրան Հայրապետյան» գրադարանը և մեդիահրատարակչությունը սկսել են **«Ուսումնական ընթերցարան» նախագիծը**: Նախագծով թվայնացվում-հրապարակվում են կրթահամալիրի և այլ մասնագետների, ծնողների կողմից ընտրված գեղարվեստական, գիտահանրամատչելի գրքեր՝ որպես սովորողին օգտակար, հետաքրքիր, նրա կրթությունը լրացնող, նախասիրությունը զարգացնող գրականություն: Ուսումնական աշխատանք են դառնում որոշակի

գրքի նկատմամբ տարբեր ժամանակներում վերաբերմունքի ուսումնասիրությունը, նրա տպագիր տարբերակների, թարգմանությունների համեմատումը, գրքի ընթերցումը, առցանց քննարկումը:

Հաշվետու շրջանում «Լուսաստղ» պատանեկան բլոգային ամսագրում հրապարակվել է մոտ 800 նյութ: ART-mskh-ի, ծնողական ակումբի 80-ից ավելի նյութերը սովորողները ստեղծել են սոցիալական ցանցերի, առցանց հարցազրույցների միջոցով:

Կրթահամալիրի դասավանդողները, սովորողները մասնակցել են 5-րդ ամենամյա ԴիջիԹեք Բիզնես Ֆորումին, SMART Technologies և «Ֆիրմա Ալֆա» կազմակերպությունների կազմակերպած ինտերակտիվ սեմինար-կոնֆերանսին, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ՏՏԿ ինստիտուտի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կազմակերպած «ՏՀՏ կիրառումը ներառական կրթության մեջ» սեմինարին, լուսաբանել դրանք mskh.am-ում, ֆորումը՝ նաև «Լուսաստղում»:

6. *Կրթահամալիրում իրականացվող հանրակրթական, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերը, որպես տեխնոլոգիական կրթության (կարողությունների ձևավորում և զարգացում) տարբեր մակարդակներ. ուսումնական կարգերի, ծրագրերի լրամշակում ՀՀ օրենքով կրթության պետական սկզբունքների ապահովման նպատակով*

Արհեստագործական ավագ դպրոցի 12-րդ դասարանի 39 սովորողներ հաջողությամբ մասնակցել են պետական որակավորման ստուգումներին: Նոր ուսումնական տարվա համար տեխնոլոգիայի դասընթացների ծրագրերի, մասնագիտական ուսուցման մոդուլների մշակումը աշխատանքային փուլում է: Արհեստագործական ավագ դպրոցի ուսուցիչների խումբը մասնակցել է «Ժառանգաբար փոխանցվող արհեստների զարգացման ընդհանուր հարթակ» ծրագրի երկօրյա սեմինար-ուսուցմանը, մասնագիտական կրթության ծրագրի ղեկավարը՝ «Մոդուլային ուսումնական պլաններով ծրագրերով ուսումնառության գործընթացի մոնիթորինգ և գնահատում» թեմայով քննարկմանը

7. *«Կրթության կազմակերպումը ավագ դպրոցում» գիտափորձի մշակում և ներդրում, այդ թվում՝ անհատական ուսուցման կազմակերպում, կրեդիտային համակարգի մշակում, մասնագիտական փորձառության կազմակերպում, հետազոտական նախագծերի և ինքնակրթության ծրագրերի մշակում*

Մայիսյան 7-րդ հավաքին ներկայացվեցին 12-րդ դասարանում ուսուցման կազմակերպման մեկ տարվա արդյունքները: Մայիսին իրականացվեց 12-րդ դասարանցիների «Ցտեսություն» ուսումնական-ավարտական նախագիծը՝ որպես ուսուցման կազմակերպման, 12-րդ դասարանի սովորողների հմտությունների գնահատման գործիք: Նախագծի վերջում «Աչքներս լույս» տոնական հանդեսին և դրան հաջորդող ուխտագնացություն-հայրենագիտական ճամփորդություններին մասնակցեցին նաև ծնողներ, լրագրողներ, հանրակրթական այլ հաստատությունների աշխատողներ և սովորողներ: Խորացված ուսուցման 10-11-րդ դասարաներցիները ամառային ուսումնական ճամբարում մասնակցեցին իրենց ընտրած գործունեության և նախասիրությունների զարգացման ակումբների աշխատանքներին, անցան մասնագիտական փորձառություն:

Մայիս-հունիս ամիսների կրթահամալիրի գնահատման ծառայությունը շարունակեց ուսումնասիրությունը 11-12-րդ դասարանցիների շրջանում՝ գնահատելու սովորողների մասագիտական կողմնորոշվածության աստիճանը, դպրոցից բուհ անցման մեխանիզմների նկատմամբ նրանց վերաբերմունքը, ընդգրկվածությունը բուհական պատրաստության ռեպետիտորական խմբերում, սովորողների ընտրած խորացված ուսուցման և դիմած մասնագիտական ուսումնական

հաստատության, լրացուցիչ կրթության և պետական ավարտական և միասնական քննությունների արդյունքները:

Մայիս-հունիսի ամիսներին դասավանդողների խմբերում և առցանց մանրամասն քննարկվել են կրթահամալիրի ավագ դպրոցների՝ Ավագ դպրոց-վարժարանի, Գեղարվեստի ավագ դպրոցի, Արհեստագործական ավագ դպրոցի 2012-2013 ուստարվա ուսումնական պլանները, դասավանդողների և մասնագետների հունիսյան պարապմունքներում ներկայացվերին գիտափորձի կազմակերպման վերաբերյալ նկատառումները:

Ամառային ճամբարի, քննարկումների, գնահատման ծառայության ուսումնասիրության, ակումբների գործունեության արդյունքները կարտացոլվեն գիտափորձի ձևակերպման մեջ: Գիտափորձի շրջանակում լրամշակվում են Ավագ դպրոցում ուսումնական միջավայրին և ուսուցման պայմաններին, սովորողի և դասավանդողի գործունեությանը ներկայացվող պահանջները:

8. *Կրտսեր դպրոց-պարտեզում իրականացվող «Իմացումի հրճվանք» ծրագրի բովանդակության բազմաձևության (լեզվագործունեություն, այդ թվում՝ օտար լեզուներ, թվաբանական, բնագիտական-բնապահպանական, տեխնոլոգիական, այդ թվում՝ մեդիա, երաժշտական, այդ թվում՝ պար և նվագարաններ, մարզական, այդ թվում՝ մարմնամարզություն և լող, թատերական) ապահովում՝ ծրագիրը կրող ուսուցչի (դաստիարակի և դասվարի) կարողությունների զարգացման և նրա աշխատանքի կազմակերպման միջոցով: Կրթահամալիրում իրականացվող «Կրտսեր դպրոց-պարտեզում 5-6 տարեկան նախադպրոցականների ծրագրված գործունեության, նրանց ընդունակություններին ու առանձնահատկություններին համապատասխան պարտեզից դպրոց անցում» գիտափորձի արդյունքների ամփոփում, վերլուծում*

Դասվարները մասնակցում են «Սեբաստացիներ» համույթին, գեղարվեստական ղեկավար՝ Հարություն Թոփիկյան, համույթի համերգներին՝ կրթահամալիրում «Անտիվիրուս Կոմիտաս+», Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդարանում, Հառիճի նորաբաց ճեմարանում:

Կրտսեր դպրոցականները իրենց դասվարների հետ մասնակցում են «Դասարան անիվների վրա» նախագծին, իրականացնում կրթական ծրագրի, կրթական նախագծերի և գաղափարների տարածման աշխատանք:

Կրտսեր դպրոցականների ծնողներն ավելի ու ավելի ակտիվ են մասնակցում կրթահամալիրում կազմակերպվող միջոցառումների-տոների կազմակերպմանը, ընդգրկվում մեդիաօլիմպիադաների մեջ: Կազմակերպվել է մանկավարժական մեդիաօլիմպիադա ծնողների համար, ծնողները մասնակցել են սովորողների այլ ուսումնական նախագծերի՝ «Ես մեդիագրագետ եմ», «Ես կարողանում եմ», «Երբ ծնվեցի...», «Երբ փոքր էի», «Իմ գովազդային հոլովակը», ուսումնական պարապմունք են վարել իրենց մասնագիտական թեմաներով: Կրտսեր դպրոցականների խումբը ստեղծել է Ուրախիկների գովազդային գործակալությունը, հրապարակել հոլովակներ:

Ապրիլ-հունիս ամիսներին ամփոփվել են կրթահամալիրում իրականացվող «Կրտսեր դպրոց-պարտեզում 5-6 տարեկան նախադպրոցականների ծրագրված գործունեության, նրանց ընդունակություններին ու առանձնահատկություններին համապատասխան պարտեզից դպրոց անցում» գիտափորձի (այսուհետ՝ գիտափորձ) արդյունքները:

Գիտափորձի իրավական հիմքերն են ՀՀ օրենքը հանրակրթության մասին (հոդված 5. «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. .... 2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին, 8)

հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը. հոդված 7. «Հանրակրթական ծրագրերը», հոդված 8. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այլընտրանքային հանրակրթական ծրագրերին համապատասխան, կարող է ստեղծել այլ տեսակի ուսումնական հաստատություն», հոդված 9. «….. այլընտրանքային կրթական ծրագրերի իրականացման համար կրթության պետական կառավարման լիազորված մարմինը կարող է սահմանել այլ ժամկետներ»), կրթահամալիրի 2009-2012թթ զարգացման ծրագիրը, որի հավելվածն է Գիտափորձը, «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» 2008թ, 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ. ծրագիրը (պետական աջակցության պայմանագրեր թթ Ա-6/24 առ 29.01.2008թ., Ա-6/22 առ 30.01.2009թ., Ա-6/20 առ 27.01.2010թ., Ա-6/19-11 առ 03.02.2011թ., Ա-6/18-12):

Իրավիճակի նկարագրություն: ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա նախադպրոցական կրթության կազմակերպման ծախսերի ֆինանսավորման վերաբերյալ» N 1427-Ն որոշումը փաստում է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ցածր ընդգրկումը համընդհանուր կրթության մեջ. «*Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Որպես թիրախային ցուցանիշ՝ նախատեսվում է այդ խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015 թվականին հասցնել 90 տոկոսի*», *նախատեսում է 1 սովորողի հաշվով ֆինանսական հատկացումներ ըստ նախադպրոցական կրթության առանձին մոդելների: ՀՀ օրենքով հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015* թվականների պետական ծրագրում» արձանագրված են ցուցանիշներ. «*Մատչելիության առումով ամենախոցելին նախադպրոցական կրթությունն է: Ներկայումս հանրապետության 400-ից ավելի համայնքներում չկան նախադպրոցական հաստատություններ (ՆԴՀ), իսկ նախադպրոցական ծրագրերում համախառն ընդգրկվածությունը 2009 թվականին կազմել է ընդամենը 24.3% (քաղաքային համայնքներում՝ 31.5%, գյուղական համայնքներում՝ 11.7%)*»: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրով նախադպրոցական կրթության բարեփոխումների բարեփոխումների 2008-2015թթ ռազմավարական ծրագրով նախատեսված այս ցուցանիշի բավարարումը գնում է երկու ուղղությամբ՝ համայնքային մանկապարտեզներում նախադպրոցական տարիքի երեխաների թվի աճ, և 400-ից ավելի համայնքներում, որտեղ մանկապարտեզ չկա, նախակրթարանների ստեղծում հանրակրթական դպրոցներում և նախապատրաստական ծրագրի իրականացում՝ ներգրավելով համաշխարհային վարկի «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի միջոցները, այլ միջոցներ: Սա հանրապետությունում ստեղծում է նոր վիճակ, երբ փաստացի առաջացել են նոր տիպի ուսումնական հաստատություններ՝ դպրոց-պարտեզների տեսքով, որոնց թիվը տարեցտարի նկատելի ավելանում է: Նախադպրոցական կրթական ծրագրում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ոչ ամբողջական ընդգրկվածության և դպրոցական կրթության մեկնարկային անհավասար հնարավորությունների և պայմանների պատճառով 4-ամյա տարրական դպրոցի 1-ին դասարանի ծրագիրն իր վրա է վերցնում նաև նախապատրաստական ուսուցման խնդիրներ: Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքով՝ նախադպրոցական կրթության իրականացման սկզբունք է նաև ընտանիքի եւ նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնա-դաստիարակչական աշխատանքների համադասվածությունը (հոդված 5), նախադպրոցական կրթության խնդիր է ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը (հոդված 6), նախադպրոցական կրթության համակարգը ներառում է ընտանիքը (հոդված 8), և «Ծնողների կամ երեխաների օրինական ներկայացուցիչների ընտրությամբ երեխան կարող է նախադպրոցական կրթություն ստանալ … բ) ընտանիքում» (հոդված 23): Փոքր չէ այն երեխաների թիվը, որոնք տանը

ստացել են հիմնավոր նախապատրաստում, որպես արդյունք՝ դպրոց են գալիս 1-ին դասարանի ծրագիրը յուրացրած: Արդյունքում մի ամբողջ ուսումնական տարի պետական և ծնողական ռեսուրսները ծախսվում են, իսկ երեխան անելու բան չի ունենում:

Կրթահամալիրում գործում է ուսումնական հաստատության նոր տիպ՝ կրտսեր դպրոց-պարտեզ, որտեղ «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիահանրակրթություն» պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրի շրջանակում իրականացվել է Գիտափորձը: Կրթական ծրագրի և կրտսեր դպրոց-պարտեզի միջավայրի փոփոխությունները չէին կարող ազդեցություն չունենալ նախադպրոցականի զարգացման ծրագրի վրա: Կրթական ծրագիրն ապահովում է սովորողի անհատական կրթության իրավունքը, կրթության շարունակականությունն ու անընդհատությունը, սովորողի ինքնուրույնության, ինքնաբուխ գործունեության, հիգիենիկ հմտությունների, ստեղծականության զարգացմանը անվտանգ ու ազատ միջավայրում:

Գիտափորձի իրականացման համար բաց մրցույթով ընտրված դասվարները վերապատրաստվել են ամբողջական ծրագրով՝ խոսքի մշակույթ, մաթեմատիկա, լողուսուցում, մարմնամարզություն, երաժշտություն-պար, տեխնոլոգիա, մեդիատեխնոլոգիաներ, օտար լեզուներ, խաղեր:

Գիտափորձն իրականացվել է հատուկ մշակված մոդել միջավայրում՝ Գեղարվեստի կրտսեր դպրոցում, Դպրոց-պարտեզում, Նոր դպրոցում, որտեղ ապահովված են անհատական և խմբային հիգիենայի պայմանները, խմբասենյակում՝ հայերեն ստեղնաշարով համակարգիչ, համացանց, էլեկտրոնային գրատախտակ, պրոյեկտոր, սանի գործունեության մեջ՝ համակարգչային ծրագրերի, համացանցի, թվային ձայնագրիչի, ֆոտոխցիկի ամենօրյա կիրառում, մարզական (մարմնամարզություն, լող, շարժուն խաղեր), երաժշտական, տեխնոլոգիական գործունեության, մանկական տոների-ծեսերի, պարի-թատրոնի, շրջակա միջավայրի յուրացման համար խմբասենյակում և բակում ստեղծված են բոլոր պայմանները: Գիտափորձում ընդգրկված սովորողները տանն ունեն համացանցին միացած համակարգիչ, թվային անհատական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու անընդհատ ուսուցումը:

mskh.am-ում խմբերն ու դասարանները, այդ թվում՝ Գիտափորձի, ունեն իրենց էջերը: Սովորողներն ու նրանց ծնողները գրանցված են mskh.am փոստում: mskh.am-ի, Live@edu-ի, «Պարտեզ» էլեկտրոնային ամսագրի, մեդիագրադարանի շնորհիվ նախադպրոցականին, կրտսեր դպրոցականին, նրանց ծնողներին հասանելի են ուսումնական նոր նյութերն ու սովորողների ուսումնական գործունեության արդյունք մեդիանյութերը, հաշվետվությունները: Կրթական ծրագրով ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունները կազմակերպվում են բոլոր սովորողների համար: Նախապատրաստական խմբի սանն ու նրա ծնողը լիարժեք մասնակցում են կրթահամալիրում ուսումնական օրացույցով նախատեսված ուսումնական ճամբարներին, ծեսերին ու տոներին, մեդիաօլիմպիադաներին, Հանրակրթական Դիջիթեքներին, ստուգատեսներին ու փառատոներին, ստեղծագործական հավաքներին:

Ուսումնական գործունեության և հանգստի համադրման հնարավորությունը թույլ է տալիս Գիտափորձի նախապատրաստական-առաջին դասարանի ուսումնական աշխատանքը չընդհատել հանրապետության դպրոցականների աշնանային, ձմեռային, գարնանային արձակուրդների ժամանակ, բաց լողափի, ամառային պարտեզի պայմաններում դասարանն աշխատում է նաև ամռան ամիսներին: Արդյունքում Գիտափորձում ընդգրկված սովորողները հանրապետության 1-4-րդ դասարանցիներից առնվազն 22 շաբաթ ավել են հաճախում դպրոց: Նախապատրաստական դասարանի սաներն ընդգրկված են երկարօրյա ուսուցման ծրագրում, ունեն լրացուցիչ կրթության ամենատարբեր ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն:

Այս պայմաններում գործունեության բազմաձևությունն ապահովում է 5 տարեկանների հմտությունների և կարողությունների ձևավորում և զարգացում գործնական կիրառման միջոցով,

համակողմանի զարգացում, անցումը 1-ին դասարանի ուսումնական ծրագրին երեխայի համար լինում է աննկատ. ուսուցման միջավայրը, պայմանները, հարաբերությունները չեն փոխվում:

Գիտափորձի շրջանակում 2009-2012թթ ստեղծվել և վերամշակվել են կրտսեր դպրոց-պարտեզում 5 տարեկանների գործունեության ծրագիրը, նախապատրաստական դասարանի գործունեության կարգը, ուսումնական գործունեության պլանը, ուսումնական պարապմունքների տեղին և ուսուցման միջոցներին ներկայացվող պահանջները, սովորողի ուսումնական գործունեության գնահատման կարգը, ուսումը 1-ին դասարանում շարունակելու պատրաստության ցուցանիշներ, ուսումնական այլ նյութեր:

Կրթահամալիրի գնահատման կենտրոնը 2012թ. ապրիլ-հունիս ամիսներին կրթահամալիրի տնօրենի հաստատած ու հրապարակած ժամանակացույցով իրականացրել է ուսումնասիրություն: Ուսումնասիրության շրջանակում մայիսին իրականացվել են 1-ին դասարանցիների «Ես մեդիագետ եմ» նախագիծը, հունիսին՝ տարրական կրթության ծրագիրն ավարտող 4-րդ դասարանցիների ուսումնական գործունեության արդյունքների՝ սահմանված կարգով ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքների քննարկում, Մարմարյա սրահում՝ տոն-հաշվետվություն: Կրթահամալիրի տնօրենը, մանկավարժության կենտրոնի միջոցով ներգրավելով ուսումնասիրության մեջ շահառու բոլոր կողմերի լիարժեք մասնակցությունը, հրապարակային դարձնելով ուսումնասիրությունը, ապահովել է անաչառություն, հավասարություն, մատչելիությունը: Մայիսին կրթության վարչության նախաձեռնությամբ քաղաքի նախադպրոցական հաստատությունների և հիմնական դպրոցների ղեկավարների կրթահամալիրում կազմակերպված հավաքների ժամանակ մանրամասն ներկայացվել է Գիտափորձը, նրանց ներկայացուցիչները մասնակցել են ուսումնասիրության, Գիտափորձի արդյունքների ամփոփման աշխատանքներին: Բաց հավաք-հաշվետվություններին մասնակցել են սովորողների ծնողները, հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների աշխատողներ, լրագրողներ: Ուսումնասիրվել-համեմատվել են գիտափորձի ծրագրում ընդգրկված սովորողների (դասարանի) և մյուս սովորողների (դասարանի) աճի բնութագրերը, առաջադիմությունը և ծրագրի յուրացման աստիճանը, անցկացվել են հարցումներ:

Ուսումնասիրությունն արձանագրել է, որ.

- «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» կրթական ծրագրի տարրական կրթության «Իմացումի հրճվանք» ենթածրագրի նախապատրաստական ուսուցման ծրագիրը վայելում է ծնողների վստահությունը:
- Գիտափորձի խմբերը տարեցտարի ավելի ամբողջական, սովորողները՝ ավելի վստահ և պատրաստված են անցնում կրթական հաջորդ աստիճան:
- Գիտափորձի դասարաններում սովորողների խոսքային, մաթեմատիկական, բնագիտական, տեխնոլոգիական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները 3-4-րդ դասարաններում չեն տարբերվում զուգահեռ դասարանների ցուցանիշներից, իսկ մեդիահմտությունների, ստեղծագործական աշխատանքի առումով նաև գերազանցում են:
- Գիտափորձում ընդգրկված սովորողները ինքնավստահ, ինքնուրույն, ազատորեն են հարաբերվում զուգահեռ դասարանների սովորողների հետ, մասնակցում են համատեղ իրականացվող տոներին-ծեսերին, ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններին:

Վերլուծություն: Գիտափորձը համարվում է հաջողված: 5 տարեկան նախադպրոցականների ծրագրված գործունեության, նրանց ընդունակություններին ու առանձնահատկություններին համապատասխան պարտեզից դպրոց անցման ծրագիրը ներառվում է «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» կրթական ծրագրի 4-ամյա տարրական կրթության ծրագրում՝ որպես կանոն սովորողին կրթական ծրագրի առաջին դասարան ընդունելով նախապատրաստական ուսուցման ծրագիրը յուրացնելուց հետո՝ դպրոցում նախապատրաստական ուսուցում ստացած վեց

տարեկաններին թույլ տալով կրթությունը շարունակել կրթահամալիրի կրտսեր դպրոցի առաջին դասարանում ըստ իր պատրաստության: Կրթահամալիրի կրտսեր դպրոցի նախապատրաստական ուսուցման դասարանում չընդգրկված երեխաներին տալ կրթական ծրագիրը ընտանեկան կրթությամբ ստանալու հնարավորություն՝ համադրելով ուսուցման առկա, հեռավար, առցանց ձևերը, ինչպես որոշված է կրթահամալիրի նոր կանոնադրությամբ:

Ուսումնասիրության արդյունքներն արտացոլվում են տարրական կրթության կրթական ծրագրի՝ 2012-2013 ուսումնական տարվա մշակումներում, որը աշխատանքային փուլում է:

9. *Գործընկեր կազմակերպությունների (ՁԻՀ, ԻՏՁՄ, Յունիքոմփ, Ֆիրմա Ալֆա, Մայքրոսոֆթ-ԱՐԷՅ, Նորք, ԿՏԱԿ, Սինոփսիս) աջակցությամբ «Նոթբուքն ինձ դասընկեր», «Էլեկտրոնային գրատախտակը, պրոյեկտորը, էլեկտրոնային գրիչները հանրակրթական դասարանում», «Ռոբոտիքս», «Էլեկտրոնային կրթահամալիր-կրթական միջավայր» ծրագրերի զարգացում*

Unicomp կազմակերպության միջոցով HP ընկերությունը կրթահամալիրին նվիրել է գերհզոր HP ProLiant DL360 G7 CTO E5645 սերվեր: Կրթահամալիրի գործընկերների Յունիքոմփի, Մայքորոսոֆթի, SS ձեռնարկությունների միության նախագծվում են սերվերի տեղադրման և գործարկման, կրթահամալիրի SS ենթակառուցվածքի աշխատանքի բարելավման աշխատանքները:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության աշխատակից Վահան Հովսեփյանի միջնորդությամբ վրացական ITI ընկերության մենեջեր Լաշա Շամատավայի այցը, ձեռք է բերվել գործընկերություն հաստատելու պայմանավորվածություն:

Ֆիրմա Ալֆան աջակցում է կրթահամալիրի տարածաշրջանում կրթահամալիրի վարկըի ամրապնդմանը՝ որպես նորարար կրթական ծրագրեր իրականացնող հաստատություն: Նրա աջակցությամբ կրթահամալիրի դասավանդողները պատրաստվում են մասնակցելու «SMART լավագույն դաս» տարածաշրջանային մրցույթին:

10. *Գործընկեր միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ էկոլոգիական կրթության ծրագրերի զարգացում, նախագծերի մշակում և իրականացում*

Լրամշակվել, քննարկվել և հրապարակվել է էկոլոգիայի դասընթացի ծրագիրը: Ծրագրի մշակման խմբի անդամները ԿԱԻ-ում մասնակցել են «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» առարկայի վերապատրաստման դասընթացին:

Ապրիլի 26-մայիսի 5-ը անցկացվել է էկոլոգիական նախագծերի բաց մրցույթ: Հաղթողները Վայոց ձորում մասնակցել են էկոլոգիական 4-օրյա ճամբարի: էկոտուրի մասնակիցները ՀՀ ԳԱԱ էկոկենտրոնում մասնակցել են UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնի «Ռիո+20» միջոցառմանը, ներկայացրել իրենց բնապահպանական թեմաները:

էկոակումբում վարպետության դաս են վարել ֆրանսիական Histories Recyclables էկոլոգիական կազմակերպության մասնագետները:

Ծրագրվում է կրթահամալիրի դպրոցներում ստեղծել բնապահպանական տեսչություն, որը կազմում է դպրոցի բույսերի անձնագրավորում, նրանց խնամքի նկատմամբ վերահսկում, բնապահպանության նախարարությունում վկայագրել կրթահամալիրի էկո-տեսուչ սովորողներին և ուսուցիչներին:

Ամառային ուսումնական ճամբարում իրականացվեց կրթական օբյեկտներում անթափոն կենցաղավարությունը՝ որպես էկոլոգիական ուսումնական պարտադիր նախագիծ: Կրթահամալիրի

մասնագետը Վորդ Վիժընն միջազգային կազմակերպության առաջարկով վարել է էկո-դաս «Հայաստանում երեխաների նկատմամբ բռնության նվազեցում» դրամաշնորհային ծրագրով:

11. *Սովորողների և ուսուցիչների ընտրությամբ՝ վրացերենի, պարսկերենի, թուրքերենի ուսուցման միջոցով միջմշակութային հաղորդակցության զարգացում: Հետազոտական աշխատանքներում ուսուցիչների օտար լեզուներ, այդ թվում՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, իսպաներեն, կիրառելու հմտությունների զարգացում*

Ապրիլի 12-14-ը կրթահամալիրում ուսումնական նախագծեր են իրականացվել Վրաստանի Թբիլիսիի թ. 98 դպրոցի սովորողների և ուսուցիչների հետ, նշվել է Վրացերենի տոնը: Կրթահամալիրի վրացերենի և թատրոնի խորացված ուսուցման 10-12-րդ դասարանցիները պատրաստվում են Թբիլիսիում մասնակցելու Շոթա Ռուսթավելու «Ընձենավորի» 300-ամյակին նվիրված միջայգային մրցույթին: Նրանք արդեն ուղարկել են մասնակցության հայտը, նկարում են կինոպոեզիա պոեմի հատվածներով:

Ֆրանսերենի ուսուցման սովորողները ֆրանսերենը գործնականում կիրառեցին ուղեկցելով ֆրանսիական Histories Recyclables էկոլոգիական կազմակերպության մասնագետներին կրթահամալիրի դպրոցներ:

Անգլերենի խորացված ուսուցման սովորողների համար մասնագիտական փորձառություն դարձավ հոլանդացի ուսուցիչների այցը կրթահամալիր:

12. *Ուսումնահայրենագիտական ճամփորդություններ, արշավախմբային գործունեություն*

Ապրիլ-հունիս ամիսներին կազմակերպվել է 92 այցելություն քաղաքի և քաղաքամերձ տարածքների մշակութային-պատմական վայրեր և 7 բազմօրյա արշավ դեպի Արցախ, Տավուշ, Վայոց ձոր, Գեղարքունիք:

Ապրիլի 28-30-ը սահմանված կարգով կազմակերպվեց հայրենագիտության ստուգատես ըստ կարգով որոշված ճամփորդական ուղղությունների: Ապրիլ-մայիսին mskh.am-ի ենթակայքերում իրականացվեց «Մեր գյուղը» նախագիծը, որով սովորողները տեքստով, ֆոտոշարքով և իրենց ստեղծած տեսանյութերով պատմում էին իրենց ծնողների, տատ-պապերի գյուղերի մասին: Մայիս-հունիսին հայրենագիտական ճամփորդություններ իրականացվեցին «Հայրենագիտություն-ուխտագնացություն» ուսումնական նախագծով, որի հովանավորը Հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդարանն է: Նախագիծը ամռան ամիսներին շարունակվում է. հունիսի 28-ին նախագծի ներկայացումն էր առաջնորդարանում: Հունիսին սկսվեց «Դասարան անիվների վրա» 2012թ. նախագծի իրականացումը:

13. *Պարբերական մեդիաօլիմպիադաների և օլիմպիական ճամբարների, «Ուսումնական մեդիաթատրոն» ստուգատեսի, ամենամյա հանրակրթական DigiTec-ի, մեդիափառատոնի կազմակերպում*

«Գարուն» մեդիաօլիմպիադան կազմակերպվել է 2012 մարտ-մայիս ամիսներին, ներառել է նաև մանկավարժական առաջադրանք: «Գարուն» մեդիաօլիմպիադայի հաղթողները հունիսի 28-հուլիսի 1-ը մասնակցել են ամառային ճամբարի Վայոց ձորում: Հունիսին սկսվել է «Ամառ» մեդիաօլիմպիադան, որով ամառային ճամբարի ընթացքում իրականացվել է «Օրվա առաջադրանք» ճամբարային

նախագիծը: Հրապարակված է «Ամառ» մեդիաօլիմպիադայի բովանդակությունը և կազմակերպման կարգը: «Ամառ» մեդիաօլիմպիադայի բովանդակությունը ներառում է Հայ գրատպության 500 և Սայաթ-Նովայի 300 ամյակները, հայրենագիտություն, ամառային ճամփորդություններ: «Ամառ» մեդիաօլիմպիադայի ծրագրով իրականացվում է նաև «Ամառային ընթերցում» նախագիծը, որը կոչված է խթանելու հանրապետության սովորողների՝ ամռանը ուսումնական աշխատանքով զբաղվելու ցանկությունը և ուղղորդելով կարդալ օգտակար, հետաքրքիր գրականություն: Նախագծով մեդիաօլիմպիադայի առաջադրանքներ են կազմվում կրթահամալիրի գրադարանում մեծ քանակով առկա ուսումնական գրականության՝ ընթերցարանի, գեղարվեստական գրքի, խնդրագրքի համար: Գրքերը առաջադրանքների հետ հասցեատերերին՝ հանրապետության այն սովորողներին, որոնք ամռանը ընթերցանությամբ և մտավոր աշխատանքով զբաղվելու ցանկություն ունեն, հասցնում են «Դասարան անիվների վրա» նախագծի մասնակիցները:

Ըստ հաստատված ժամանակացույցի և կարգի կազմակերպվել են հունիսյան փառատոները՝ թատերական, երաժշտական, ֆիլմերի:

14. *Սովորողների օժտվածության զարգացման ակումբների գործունեության կազմակերպումը որպես հեղինակային կրթական ծրագրով լրացուցիչ կրթություն («Տիեզերք», «Ռոբոտիքս», ծրագրավորողների, գիտակների, մշակութային, հայրենագետների, «Խաղարկային դատարան»), աստղացուցարանի նախագծի և գործունեության մշակում*

Սովորողների օժտվածության զարգացման ակումբները սահմանված կարգով գործում են ըստ իրենց աշխատակարգերի և ծրագրերի: Կրթահամալիրի Մայր դպրոցում բացվել է աստղադիտարան-լաբորատորիան. աստղադիտակը մայիսին ձեռք է բերվել «Հեռանկար» կրթական ծրագրի աջակցությամբ: «Տիեզերք» ակումբի պարապմունքներին պարբերաբար մասնակցում են Երևանի «Քվանտ» վարժարանի սովորողները: Մեդիակենտրոնում գտնվող աստղացուցարան այցելել է մոտ 20 խումբ Երևանի, մարզերի ուսումնական հաստատություններից, կրթահամալիրի սովորողներ: «Տիեզերք» ակումբի սովորողները հունիսի 6-ին հանրապետության գիտական-ուսումնական խմբերի հետ Արևի սկավառակի վրա Վեներան դիտել են սեփական աստղադիտակով: Բյուրականում հունիսի 9-ից 10-ը ԿԳՆ տեխնիկական ստեղծագործական հանրապետական կենտրոնի (ղեկավար՝ Ֆերդինանտ Ղարիբյան), «Քվանտ» վարժարանի տիեզերական խմբակի (ղեկավար՝ Ավետիք Գիրգորյան) և կրթահամալիրի «Տիեզերք» ակումբի (ղեկավար՝ Լևոն Արամյան) անցկացրեցին տարեկան աշխատանքների ամփոփում և համատեղ բաց դաս: «Տիեզերք» ակումբի սաները մասնակցել են Վայոց ձորում կազմակերպված ամառային ուսումնական ճամբարին, որտեղ գիշերային երկնքի դիտումներ են արել, որին մասնակցել են Վարդահովտի դպրոցականներ:

«Ռոբոտիքս» ակումբում նախաձեռնել են նոր ուսումնական ռոբոտի հավաքումը: Խաղարկային դատարանում ապրիլ-հունիս ամիսներին իրականացվել է «Հանուն խղճի ազատության» դատը: Կինոակումբում ձևավորվել է վիզուալ էֆեկտների տաղավարը, ակումբի սովորողները մասնակցել են այլ ստուդիաներում նկարահանվող ֆիլմերի աշխատանքներին: Անգլերեն խոսողների և մշակույթի ակումբի սովորողները մասնակցել են ԵՊԼՀ-ի, Սլավոնական համալսարանի միջոցառումներին, ամառային ճամբարում նախաձեռնել են ուսումնական դասընթացների հիմնական տերմինների պատկերազարդ նոր էլեկտրոնային բառարանի ստեղծում: Թատերական ակումբը կազմակերպել է հունիսյան թատերական փառատոնը: Գիտակների ակումբի սովորողները մասնակցել են Հանրային հեռուստատեսության «Հայոց հարց» հաղորդաշարի հաղորդումների: Կրթահամալիրում երաժշտասեր սովորողների համար կազմակերպվել է հանդիպում հեղինակ-կատարող Ռուբեն Հախվերդյանի հետ, ելույթ են ունեցել Երևանի պետական կամերային երգչախումբը, «Հովեր», «Գեղարդ» համույթները: Բացվել է Գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիայի ուսանողների աշխատանքների

ցուցահանդեսը: Կազմակերպվել է հանդիպում ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի մասնագետների հետ:

Տարբեր ակումբների պատանիներից ընտրվել է Արցախում հուլիսի ամսին կազմակերպվող «Ասպետ» ուսումնա-հայրենասիրական ճամբարի մասնակիցների 60 հոգիանոց խումբը, որը մայիս-հունիս ամիսներին պատրաստվել է և Արցախի ԿԳ նախարարի և ճամբարի ղեկավարության պաշտոնական հրավերով հուլիսի 9-ին մեկնել է Արցախ:

Սովորողների և դասավանդողների ստեղծագործական մեդիա-աշխատանքի արդյունքները ամփոփվել են ամենշաբաթյա «Մեդիաուրբաթ» պարապմունքների ժամանակ:

Կրթահամալիրի 10 սովորողներ մասնակցել են SS ոլորտում ՀՀ նախագահի ամենամյա կրթական պարգևների մրցույթին:

Ապրիլ-հունիս ամիսներին կրթահամալիրի սովորողների և ուսուցիչների խմբերը ըստ նախասիրության մասնակցել են Երևանի մշակութային (բաց համերգներ, ցուցահանդեսներ, **շնորհանդեսներ, փառատոներ,** «Թանգարանային գիշեր»), գրադարանային (գրատպության 500-ամյակի, Հայաստանի գիտական վիրտուալ գրադարանի, ԵՊԼՀ նոր գրադարանի բացում, «Ֆլեշմոբ դիվիզիա» ամենամյա «Բացօթյա ընթերցանության փառատոն»), մարզական (միջդպրոցական բասկետբոլի Երևան քաղաքի առաջնություն, ձեռքի գնդակի բաց առաջնություն, մարզական խաղերի վոլեյբոլի քաղաքային առաջնություն, բասկետբոլի, սեղանի թենիսի ընկերական հանդիպումներ, օլիմպիական վազքի օր):

15. *Սովորողների և դասավանդողների ներհայաստանյան և միջազգային փոխանակման ծրագրերի, պարբերական առցանց քննարկումների, հետազոտող ուսուցիչների ամենամյա մայիսյան, հոկտեմբերյան ստեղծագործական, բաց հավաքների կազմակերպում: Մեդիատեխնոլոգիական հանրակրթության գործընկեր դպրոցների ցանցի, այդ դպրոցների համար ուսումնական փաթեթի ստեղծում, ղեկավարների և դասավանդողների վերապատրաստում*

Մայիսի 17-20-ը կազմակերպվեց հեղինակային մանկավարժության հեղինակների 7-րդ ամենամյա հավաքը: Հավաքի ծրագիրն ընդգրկում էր կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրերի 2011-2012 ուստարվա արդյունքների ներկայացումը: Հավաքին ներկայացվող հոդվածները հրապարակվեցին «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 56, 58-րդ համարներում, նյութերը՝ mskh.am-ում, սոցիալական կայքերում: «Դպիրի» 57-րդ համարը բազմալեզու էր. այնտեղ անգլերեն, ռուսերեն, վրացերեն թարգմանությամբ հրապարակվեցին մայիսյան հավաքի և էլեկտրոնային ամսագրի նախորդ համարներում լույս տեսած, կրթահամալիրի առանձնահատկությունը, նորարարությունը ներկայացնող նյութեր: Հավաքին մասնակցեցին մանկավարժական աշխատողներ հանրապետության նախադպրոցական, հանրակրթական հաստատություններից, լրագրողներ, ծնողներ: Հավաքը լուսաբանվեց mskh.am-ում, ArmnewsTV-ի եթերում: Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արարատյան և Արցախի թեմերի աջակցությամբ ապրիլի 28-ից մայիսի 1-ը կրթահամալիրի սովորողների և դասավանդողների արցախյան ուխտագնացության ժամանակ Արցախի ԿԳ նախարարության, Ստեփանակերտի թ 8, թ. 11, Շուշիի Աբովյանի անվան, Մարդակերտի Վանքի դպրոցների հետ քննարկվեցին համագործակցության խնդիրներ, համատեղ իրականացվող նախագծեր:

Ապրիլին կազմակերպվել է Լոռու մարզի դպրոցների տնօրենների այցը կրթահամալիր: Քաղաքի կրթության վարչության նախաձեռնությամբ մայիսին կրթահամալիրում կազմակերպվել է Երևանի 12 հիմնական դպրոցների տնօրենների հավաք:

Գավառի թ. 5 դպրոցի սովորողներն իրենց ուսուցչի հետ խրախուսական մրցանակ են շահել էկոտուրում և էկոտուրի մյուս հաղթողների հետ մասնակցել մասնակցել Վայոց ձորի հունիսյան ուսումնական ճամբարին:

Արգենտինայի Բուենոս-Այրեսի Մխիթարյան վարժարանի տնօրինուհի Ադրիանա Սուբարլյանը նամակով քննարկել է կրթահամալիրի և վարժարանի գործընկերային կապերը զարգացնելու, սեպտեմբերին Երևանում հանդիպելու և շախմատի առցանց ամենամյա մրցումները կազմակերպելու հարցերը:

Հայ-հոլանդական կրթական համագործակցության հեռանկարներ են քննարկվել մայիսին հոլանդացի բնագիտության ուսուցիչների կրթահամալր այցի ժամանակ:

Մայիսի 14-16-ը ՄԿՈՒԶԱԿ-ում մանկավարժական աշխատողների վերապատրաստման ժամանակ կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագիրը ներկայացվել է հանրապետության ՄԿՈՒ հաստատությունների դասավանդողներին:

Կրթական ծրագրի տարածման առաքելությամբ կրթահամալիրի դասավանդողներն ու սովորողները այցելել են քաղաքի հիմնական դպրոցներ և մանկապարտեզներ, Երևանի հանրային զբոսավայրեր, մերձակա գյուղերը:

Հունիսի 14-15-ին կրթահամալիրում «Ուսումնական ամառ» նախագիծը ներկայացվել է քաղաքի ՆՈՒՀ-երի, հիմնական դպրոցների աշխատողների, կրթահամալիրին ծանոթացող ծնողների: Կրթահամալիրը հանրությանը պատշաճ ներկայացնելու համար «Ուսումնական ամառ» նախագծով սկսվել է «Դասարան անիվների վրա» նախագծի իրականացումը:

Կրթահամալիրի սովորողը մասնակցում է միջազգային ճամբարի Վրաստանում:

Գործընկեր հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների ցանցերի ստեղծման մեր փորձը ցույց տվեց, որ չնայած կրթահամալիր այցելող, փորձին ծանոթացող տնօրենների և մանկավարժական աշխատողների գնահատականին՝ գործընկերության հաստատման համար պակասում է հաստատության՝ կրթական ծրագիր, ուսումնական այլ ծրագրեր և նյութեր ընտրելու, որոշումներ կայացնելու ինքնուրույնությունը, ծրագրի տեղայնացման, միջավայրի հարմարեցման համար պետք է տեղական ինքնակառավարման մասմնի աջակցությունը: Կրթահամալիրը պատրաստ է իր փորձը փոխանցելու և աջակցելու բոլոր այն հաստատություններին, որոնց կառաջարկեն ԿԳ նախարարությունը, Երևանի և մարզային կրթության վարչությունները:

16. *Աջակցություն կրթահամալիրի՝ որպես մեդիահանրակրթության և տեխնոլոգիական կրթության այլընտրանքային (հեղինակային) արդյունավետ համակարգի պահպանությանը (մանկավարժության կենտրոն և մանկավարժական էլեկտրոնային «Դպիր» պարբերական, ուսումնական կայք (այդ թվում՝ ինտերնետային TV, ինտերնետ ռադիո, թարգմանչական լրատվական գործակալություն, Վիքիպեդիայի խմբագրություն), մեդիագրադարան, մեդիահրատարակչատուն, մեդիատպագրություն*

Ապրիլ-հունիս ամիսներին հրապարակվել են mskh.am-ի մոտ 4000 էջ, և գործել են նրա տասնյակից ավելի ենթակայքերը, հրապարակվել է «Դպիր» էլեկտրոնային ամսագրի 54-59-րդ համարները՝ 100-ից ավելի էլեկտրոնային էջ, այդ թվում՝ մանկավարժական դասական երկերի թարգմանություն: mskh.am-ը պահպանում է իր առաջատար դիրքը հայկական կրթական և գիտական վեբ կայքերի մեջ: TV mskh-ը թողարկել է մոտ 40 հաղորդում: Մեդիահրատարկչությունը թվայնացրել է ավելի քան 70 կտոր ուսումնական գրականություն՝ դասագիրք և գիտահանրամատչելի, գիտաֆանտաստիկ, գեղարվեստական ստեղծագործություններ, հրապարակել 70-ից ավելի այլ ուսումնական նյութեր, այդ թվում՝ աուդիո-տեսանյութեր:

Մարտ-հունիս ամիսներին մշակվել, մասնաժողովում, խորհրդում և առցանց քննարկվել են կրթահամալիրի կանոնադրության փոփոխությունները, խոհրդի հաստատած նոր կանոնադրությունը ներկայացվել է ԿԳ նախարարություն: Մշակվել է կրթահամալիրի ֆինանսատնտեսական բարեփոխումների ռազմավարական ծրագիրը, հաստատվել է կրթահամալիրի խորհրդում, և սկսվել է ծրագրի կազմակերպման աշխատանքը:

Կրթահամալիրի մասնագետը մասնակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կազմակերպած «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով քննարկմանը:

17. *Աջակցություն կրթահամալիրում իրականացվող նախադպրոցական այլընտրանքային կրթության ծրագրին. 2-3, 3-4, 4-5 տարեկան երեխաների նախակրթարանային խմբերի պահպանում, 2007թ. ծնված երեխաների՝ կրթահամալիրի կրտսեր դպրոցին նախապատրաստական ուսուցման կազմակերպում, հանրապետության նախադպրոցական հաստատությունների ղեկավար և մանկավարժական աշխատողների վերապատրաստում, ծրագրային նյութերի և վերապատրաստման մոդուլների հրատարակում, ՀՀ ԿԳՆ սահմանած կարգով ներկայացում, «Պարտեզ» էլեկտրոնային կայքի պահպանում*

Կրթահամալիրի նախակրթարաններում սահմանված կարգով գործում են 8 խմբեր, հաճախում է 2-5 տարեկան 179 սան: Նախադպրոցական կրթության ապրիլ-հունիս ամիսներին իրականացվել են «Բարի լույս, պարտեզ», «Օրոր, օրոր ասեմ, քնանաս», «Հետազոտում են փոքրերը», «Համերգ փոքրիկների մոտ», «Ամառային պարտեզ» նախագծերը: Հունիսի 1-ից բաց լողափերում սկսվել են նախակրթարանի սաների լողուսուցման, պարապմունքները: Լրամշակվել է լողավազանների պահպանման և շահագործման աշխատակարգը:

Քաղաքի կրթության վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է Երևանի 12 մանկապարտեզների տնօրենների հավաքը կրթահամալիրում:

Ծրագրի ընթացքին և առկա արդյունքներին մանրամասն կարող եք ծանոթանալ mskh.am-ում և ենթակայքերում:

Կրթահամալիրի տնօրեն՝ Աշոտ Բլեյան

Ծրագրերի կենտրոնի ղեկավար՝ Սուսան Մարկոսյան